ԵՐՎԱՆԴ ԹԵՐՋՅԱԻ ԱՆՎԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ANSEF) 2025 Թ. ԳԻՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

23 սեպտեմբերի, 2025 թ

Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամը (ԳԿՀԱՀ/ANSEF) հրավիրում է 2025թ. գիտական դրամաշնորհի մրցույթի: Դիմումները պետք է ներկայացվեն ԳԿՀԱՀ առցանց հարթակներով՝ www.ansef.org կամ https://schrodingersdog.net/: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2025 թվականի նոյեմբերի 30-ը: Մրցույթի արդյունքները կհայտարարվեն 2026 թվականի ապրիլի 15-ին: Լրացուցիչ հարցերի համար խնդրում ենք գրել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ help@ansef.org:

ԳԿՀԱՀ/ANSEF 2025թ. դրամաշնորհային մրցույթի պայմաններն են.

- Դրամաշնորհի գումարը 7500 ԱՄՆ դոլար է: Դրամաշնորհային ծրագրի տևողությունը մեկ տարի է: Ծրագրի ավարտից հետո 2 շաբաթվա ընթացքում անհրաժեշտ է ներկայացնել վերջնական հաշվետվություն:
- Դրամաշնորհային միջոցները տրամադրվելու են միայն Հայաստանում գտնվելու ընթացքում հետազոտություն իրականացնողներին:
- Հետազոտական խմբի ղեկավարը պետք է լինի գիտական կարիերայի վաղ փուլում գտնվող գիտությունների թեկնածու, համալսարանի կամ գիտահետազոտական հիմարկի գիտաշխատող, դասավանդող մասնագետ:
- Դրամական խրախուսանք ստացող հետազոտական խմբի անդամներ կարող են լինել համալսարանի կամ գիտական հիմարկի աշխատակից մագիստրոսները, ասպիրանտները, հետդոկտորները, գիտական կարիերայի վաղ փուլում գտնվող կրտսեր կամ ավագ գիտաշխատողները, դասախոսները, դասախոսի օգնականները, դոցենտները:
- Մրցույթը բաց է հետևյալ հետազոտական ոլորտների համար՝

- ✓ Ֆիզիկական գիտություններ (մինչև 9 մրցանակ),
- ✓ Հումանիտար և հասարակական գիտություններ (մինչև 9 մրցանակ),
- ✓ Բնական գիտություններ (միայն մարդու կենսաբանություն, մանրէաբանություն և մոլեկուլային կենսաբանություն ոլորտները) (1 մրցանակ)։

Խրախուսելի են հատկապես հումանիտար գիտությունների ոլորտից դիմումները։

Սահմանվել են հետևյալ հատուկ գիտական դրամաշնորհները, որոնցից յուրաքանչյուրը 7500 ԱՄՆ դոլար է՝

- ➢ Արամ Չոբանյանի անվան գիտական դրամաշնորհ (https://en.wikipedia.org/wiki/Aram_Chobanian)
- ➢ Ներսես Կրիկորյանի անվան գիտական դրամաշնորհ (https://en.wikipedia.org/wiki/Nerses_Krikorian)
- ➢ Երամյան ընտանիքի կողմից սահմանված գիտական դրամաշնորհ

Նախկինում Երվանդ Թերզյանի անվան ԳԿՀԱՀ գիտական դրամաշնորհին www.ansef.org – ի միջոցով դիմած հայտատուները նոր հայտ ներկայացնելիս կարող են օգտվել նախորդիվ գրանցած հաշվից։ Նոր դիմորդները պետք է նախ գրանցվեն, ստանան էլ. հասցեին ուղարկված հաստատող գրություն և նոր մուտք գործեն հաշիվ։

ԳԿՀԱՀ-ի պորտալի հետ կապված այլ տեխնիկական հարցերի պարզաբանման համար խնդրում ենք գրել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ website@ansef.org:

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ